

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիր
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

<i>Ծրագրի անվանումը</i>	“Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում”
<i>Դիմող կազմակերպության անվանումը</i>	«Կապանի կանանց Ռեսուրս Կենտրոն» հասարակական կազմակերպություն
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Քրիստինա Մաղաթեյան Հեռ.՝ (093) 02 55 35 Էլ.փոստ՝ christina.saghatelyan@gmail.com
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Կապան
<i>Ծրագրի տևողությունը</i>	01.07.2015-01.11.2015թ. 4 (չորս) ամիս
<i>Ծրագրի հակիրճ նկարագիրը</i>	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում ծննդոգնության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի բացահայտում և նվազեցում՝ տարածաշրջանի կանանց իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով
<i>ՀԵԻԱ-ից պահանջվող Գումարի չափը</i>	1202000 (Մեկ միլիոն երկու հարյուր երկու հազար) ՀՀ դրամ
<i>Ներդրման գումարի չափը</i>	205,000 (Երկու հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	1407000 (Մեկ միլիոն չորս հարյուր յոթ հազար) դրամ
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	Առկա չէ

Դիմող կազմակերպության/անների/ նկարագրություն (առավելագույնը կես էջ)

"Կապանի Կանանց Ռեսուրս Կենտրոն" ՀԿ- ն հիմնադրվել է 2009թ. ապրիլի 29-ին Կապանի մի խումբ կանանց և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ժողովրդավարության բաժնի աջակցությամբ: Այն կամավոր հիմունքներով ստեղծված, կանանց անդամակցության վրա հիմնված կազմակերպություն է, որը բաց է բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են հզորացնել և բարձրացնել կանանց ներգրավվածությունը հասարակական կյանքում: "ԿԿՌԿ" ՀԿ-ն ունի 30 անդամ և 7 խորհրդի անդամ: Այն դարձել է տարածաշրջանի երիտասարդ կանանց հանդիպումների, քննարկումների, կարիքների վերհանման ու հուզող հարցերի բարձրացման վայր: Գործունեության 6 տարվա ընթացքում կազմակերպությունն իրականացրել է 18 ծրագիր: Կազմակերպության ծրագրերի և դասընթացների մեջ ներգրավված է եղել ավելի քան 3800 շահառու, որոնցից մոտ 120-ը ընդունվել է աշխատանքի: Կենտրոնում տիրում է թիմային աշխատանքի, փոխըմբռնման, միմյանց հանդեպ հարգանքի, նորը սովորելու ձգտման մթնոլորտ:

“Կապանի Կանանց Ռեսուրս Կենտրոն” ՀԿ-ի առաքելությունն է՝ **հզորացնել կանանց դերը տարածաշրջանում՝ բարձրացնելով նրանց իրավագիտակցության մակարդակը, զարգացնելով և խթանելով նրանց ունակություններն ու հմտությունները:**

Ծրագրի նկարագրություն (առավելագույնը երկու էջ)

“Կոռուպցիոն ռիսկերը ծննդոգնության ոլորտում” ծրագրի գլխավոր նպատակն է բացահայտել և նվազեցնել ՀՀ Մյունխիքի մարզի Կապանի համայնքի ծննդոգնության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը: Ծրագիրը միտված է բարձրացնել Կապանի տարածաշրջանի կանանց իրազեկվածության մակարդակը՝ վեր հանելով կանանց կոնսուլտացիայի և ծննդոգնության բաժանմունքներում առկա խնդիրները և իրազեկել դրանց մասին հասարակությանը և համապատասխան մարմիններին: Այդ ոլորտում կոռուպցիան և կոռուպցիոն ռիսկերը ուսումնասիրելու և իրական պատկեր ստանալու համար կիրականացվեն հարցազրույցներ, հանդիպումներ, հաղորդում-բանավեճ, հարցումներ տարբեր տարիքի կանանց հետ:

Նախքան հանդիպումները, փորձագետի կողմից կմշակվի հարցաթերթ, որն իր մեջ կպարունակի այն բոլոր հարցերը, որոնց պատասխանները կտան Կապանում ծննդոգնության ոլորտի ընդհանուր պատկերը: Հարցումներն կիրականացնեն 7 երիտասարդ աղջիկներ, ովքեր վերապատրաստում կանցնեն՝ «Հարցազրույց վարելու, հարցաթերթ կազմելու և հարցումներ իրականացնելու» թեմայով եռօրյա դասընթացներին: Հարցումները կիրականացվեն հղիների և վերջին 2 տարվա ընթացքում ծննդաբերած կանանց շրջանում: Կլինեն հանդիպումներ տարբեր տարիքի կանանց և աղջիկների հետ, ովքեր երբևէ օգտվել են կանանց կոնսուլտացիայից և ստացել են համապատասխան բուժօգնություն: Ծրագրի արդյունքում կունենանք 10 օրինակից տպագրված գրքույկ, որտեղ կլինեն SPSS ծրագրի միջոցով վերլուծված հարցման արդյունքները, փորձագետի կողմից արված եզրակացությունն ու մշակված առաջարկությունների փաթեթը: Գրքույկները կբաժանվեն հասարակական կառույցներին և համայնքի այլ կազմակերպություններին: Առաջարկությունների փաթեթը կքննարկվի նաև առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ, որն էլ հետագայում կներկայացվի հանրությանը:

Հաշվի առնելով, որ այս ոլորտի կոռուպցիոն խնդիրն արդիական է և պայմանավորված է նաև հասարակության իրազեկվածության ցածր մակարդակով, նախատեսվում է մարզային հեռուստաընկերության հետ համատեղ պատրաստել և ցուցադրել սոցիալական տեսահոլովակ, որն ուղղված կլինի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդատան բաժանմունքի գործունեության թափանցիկ աշխատելառձի բարելավմանը:

Տեսահոլովակը կցուցադրվի տեղական 2 հեռուստաընկերությունների կողմից: Կպատրաստվի հաղորդում-բանավեճ, որը կցուցադրվի „Սոսի TV,, հեռուստաընկերության եթերում: Ծրագրի վերջնական փուլում կկազմակերպվի հանրային քննարկում, որտեղ կներկայացվի ծրագրի ընթացքում իրականացված գործողություններն ու արդյունքները: Քննարկմանը, որը տեղի կունենա քաղաքապետարանի նիստերի դահլիճում կմասնակցեն մի շարք հկ-ների ներկայացուցիչներ, բժիշկներ, ԶԼՄ ներկայացուցիչներ, կանայք և աղջիկներ, մարզպետարանի առողջապահության բաժնի աշխատակիցներ, ովքեր հնարավորություն կունենան ծանոթանալու ծրագրի ընթացքում վեր հանված խնդիրների, առաջարկությունների փաթեթի հետ և բարձրաձայնել բոլոր հուզող խնդիրների մասին: Այն կլուսաբանվի տեղական հեռուստաընկերությունների կողմից:

Խնդրի համառոտ վերլուծություն

Համաձայն ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման՝ ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 761-Ա-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում են անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում <http://www.healthrights.am/arm/more/1174/>:

Այնուամենայնիվ, Կապանի տարածաշրջանում Կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքները պատշաճ կերպով չեն իրականացնում վերոնշյալ հրամանում սահմանված դրույթները: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է իրագեկ լինել և լիարժեք օգտվել իր իրավունքներից, պետության կողմից տրամադրվող արտոնություններից: Հաշվի առնելով Կապանի՝ մայրաքաղաքից մեծ հեռավորության վրա գտնվելու հանգամանքը, ինչպես նաև գործազրկության բարձր մակարդակը, սոցիալ-տնտեսական ցածր պայմանները, շատ կարևոր է տարածաշրջանում ունենալ թափանցիկ և հաշվետու կառույցներ: «Կապանի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ն ունի ավելի քան 6 տարվա գործունեության փորձ, 3800-ից ավելի շահառու, ունեցել է բազմաթիվ հնարավորություններ՝ հանդիպումների, քննարկումների արդյունքում պարզելու, որ Կապան համայնքում, մինչ օրս, ծննդօգնության և կոնսուլտացիաների ժամանակ կանանց մեծ մասը վճարում է բավականին մեծ գումարներ՝ անվճար տրամադրվող ծառայությունների համար: Բնակչությունը, ինչպես նաև ՔՀԿ-ի ներկայացուցիչները, կարիք ունեն վերհանել ու գնահատել այս ոլորտում տիրող իրական վիճակը և հնարավորության սահմաններում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, որոնք կարող են նպաստել պետության կողմից տրամադրվող ծառայությունների և արտոնությունների լիարժեք և պատշաճ կերպով իրականացմանը:

Հիմնախնդիր՝ Կապան համայնքում հանրությունը ցածր է իրագեկված ծննդօգնության ոլորտում տրամադրվող անվճար բուժօգնության և կոնսուլտացիոն ծառայությունների մասին:

Ծրագրի նպատակներն ու առաջարկվող գործողությունները

Ծրագրի հիմնական նպատակը՝ բացահայտել և նվազեցնել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքում ծննդօգնության ոլորտում կոռուպցիոն ռիսկերը՝ տարածաշրջանի կանանց իրագեկվածության մակարդակի բարձրացման միջոցով:

Ծրագիրն ունի երկու ենթանպատակ՝

ա) Վերհանել Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում առկա կոռուպցիոն ռիսկերը և կոռուպցիայի մակարդակը:

Գործողություն-1 Փորձագետի կողմից կնշակվի հարցաթերթ, որն ուղղված կլինի կոռուպցիոն ռիսկերի վերհանմանը:

Գործողություն-2 Կկազմակերպվի վերապատրաստման եռօրյա դասընթաց 7 ակտիվ երիտասարդների համար՝ ճիշտ հարցումներ իրականացնելու նպատակով:

Գործողություն-3 Վերապատրաստված երիտասարդները կիրականացնեն հարցումներ հղիների և նոր ծննդաբերած (վերջին 2 տարվա ընթացքում) կանանց շրջանում՝ պարզելու Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում առկա կոռուպցիայի մակարդակը:

Գործողություն-4 Փորձագետի կողմից կիրականացվի վերլուծություն և կներկայացվի հաշվետվություն SPSS ծրագրի միջոցով:

Գործողություն-5 Կնշակվի առաջարկությունների փաթեթ՝ Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և տիրող վիճակի բարելավման վերաբերյալ:

Գործողություն-6 Վերլուծության արդյունքները, եզրակացությունն ու փորձագետի կողմից մշակված փաթեթը կտպագրվեն գրքույկի տեսքով, 10 օրինակից:

Գործողություն-7 Առաջարկությունների փաթեթը կներկայացվի առողջապահության նախարարության համապատասխան բաժին, որը կքննարկվի նաև հանրության հետ հանդիպման ժամանակ:

բ) Բարձրացնել Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդատան բաժանմունքի գործունեության թափանցիկությունը, ինչպես նաև հանրության իրազեկվածության մակարդակը տվյալ ոլորտում:

Գործողություն-1 Կպատրաստվի սոցիալական տեսահոլովակ՝ հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայության վերաբերյալ, որը կցուցադրվի տեղական 2 հեռուստաընկերություններով:

Գործողություն -2 Կպատրաստվի հաղորդաշար-բանավեճ, որին կմասնակցեն բժիշկ-գինեկոլոգ և համապատասխան անձինք:

Գործողություն-3 Կկազմակերպվի և կիրականացվի հանրային քննարկում, որտեղ կներկայացվի ծրագրի ընթացքում իրականացված գործողությունների արդյունքները (առաջարկությունների փաթեթ, սոցիալական տեսահոլովակ, հանդիպումների արդյունքներ և այլն):

Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուներ

Ծրագրի ուղղակի շահառուներ են հանդիսանում տարածաշրջանի հղի և նոր ծննդաբերած կանայք, որոնք օգտվում են հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված բժշկական օգնության և սպասարկման առողջապահական ծառայություններից:

Որպես անուղղակի շահառուներ հանդես են գալիս տարածաշրջանում գործող տարբեր սոցիալական և առողջապահական հաստատություններ:

Կիրառվող մեթոդաբանությունը

- Հետազոտողների դասընթացի ծրագրի ուսումնական կառուցվածքը բաղկացած է ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության կրթամասերից և գործնական պարապմունքներից: Առաջինը կծառայի հետազոտողի որակավորման համար անհրաժեշտ ընդհանուր հենքի ապահովմանը, իսկ երկրորդը կրթամասը կապահովի հետազոտողի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և գործնական հմտությունների անհրաժեշտ հենքը:
- Հղիների և նոր ծննդաբերած (վերջին 2 տարվա ընթացքում) կանանց շրջանում հարցումները կիրականացվեն քանակական տվյալների վերլուծության SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ: Հիմնական վիճակագրական վերլուծությունից բացի կհաշվարկվեն նաև վիճակագրական տվյալների կորելիացիաները, որոնց հիման վրա արդեն կկատարվի նկարագրական վերլուծություն:
- Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում տիրող վիճակի առնչությամբ առաջարկությունների փաթեթը կկազմվի այն բովանդակությամբ, որպեսզի բացահայտի ոլորտում տիրող իրավիճակն ու երևույթները, կոռուպցիոն ռիսկերի առկայությունն ու իրականացվող գործողությունների թերի կողմերը, առաջարկելով հեռանկարային ռազմավարության մշակում՝ այդ ոլորտի դինամիկ ու կայուն զարգացման, ինչպես նաև ծառայությունների որակի և թափանցիկության բարձրացման համար:

Ակնկալվող արդյունքները և ազդեցությունը

Արդյունք 1

Վեր են հանվել Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում առկա կոռուպցիոն ռիսկերը, իրականացվել են հարցումներ 150 հղի և նոր ծննդաբերած կանանց շրջանում, որի վերլուծության արդյունքները բրոշյուրի տեսքով 50 օրինակից տպագրվել և ներկայացվել է տարբեր կազմակերպություններին:

Փորձագետի կողմից մշակվել է առաջարկությունների փաթեթ, որը քննարկվել է ոլորտի պատասխանատուների ներկայացուցիչների, հանրության հետ և ներկայացվել շահագրգիռ կառույցներին՝ Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում տիրող վիճակը բարելավելու և հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Արդյունք 2

Կապան համայնքում 5000-6000 մարդու մոտ բարձրացել է իրազեկվածության մակարդակը անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ, սոցիալական տեսահոլովակի, հաղորդաշար-բանավեճ հանրային քննարկումների և սոցցանցերի միջոցով:

Պատրաստվել է սոցիալական տեսահոլովակ հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների վերաբերյալ: Սոցիալական տեսահոլովակը մեկ ամիս ցուցադրվել է տեղական հեռուստաընկերությամբ՝ ապահովելով հանրության իրազեկվածության շարունակականությունը:

Պատրաստվել և մարզային հեռուստատեսության կողմից ցուցադրվել է հաղորդաշար-բանավեճ Ծննդօգնությունը Կապանում թեմայով:

Իրականացվել է հանրային քննարկում, որտեղ ներկայացվել են ծրագրի ընթացքում իրականացված գործողությունների արդյունքները (բրոշյուրներ, առաջարկությունների փաթեթ, սոցիալական տեսահոլովակ բանավեճ քննարկման արյունքներ): Այսպիսով, բարձրացվել է Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդատան բաժանմունքի գործունեության թափանցիկության, ինչպես նաև հանրության իրազեկվածության մակարդակը տվյալ ոլորտում:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին: Անհրաժեշտության դեպքում կարող եք ավելացնել լրացուցիչ տողեր:)

Շաբաթ	Գործողություն
1-ին	Նախապատրաստական փուլ: Աշխատակազմի հավաքագրում, պայմանագրերի կնքում
2-րդ	Փորձագետի կողմից հարցաթերթերի կազմում :
3-րդ	Վերապատրաստման եռօրյա դասընթաց 7 երիտասարդների համար, որոնք հետագայում կիրականցեն սոց.հարցումներ
4-րդ	Հարցումներ հղիների և նոր ծննդաբերած (վերջին 2 տարվա ընթացքում) կանանց շրջանում

5-րդ	Իրականացված հարցումների արդյունքների վերլուծություն և հաշվետվության ներկայացում SPSS ծրագրի միջոցով
6-րդ	Իրականացված հարցումների արդյունքների վերլուծություն և հաշվետվության ներկայացում SPSS ծրագրի միջոցով
7-րդ	Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում տիրող վիճակի առնչությամբ առաջարկությունների փաթեթի մշակում փորձագետի կողմից:
8-րդ	Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում տիրող վիճակի առնչությամբ առաջարկությունների փաթեթի մշակում

9-րդ	50 օրինակով գրքուկի մշակում և տպագրություն
10-րդ	Կապանի կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության բաժանմունքներում տիրող վիճակի առնչությամբ առաջարկությունների փաթեթի պրեզենտացիա և ներկայացում առողջապահության նախարարություն :
11-րդ	Հղիության ընթացքի և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակի պատրաստում

12-րդ	Հիդրոլոգիական ընթացքի և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակի պատրաստում
13-րդ	Հիդրոլոգիական ընթացքի և ծննդաբերության հետ կապված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակի պատրաստում
14-րդ	Հագորդաշար-բանավեճի պատրաստում և ցուցադրություն մարզային հեռուստաընկերության կողմից:
15-րդ	Ծրագրի ընթացքում իրականացված գործողությունների արդյունքների ներկայացում և հանրային քննարկում (գրքույկ, առաջարկությունների փաթեթ, սոցիալական տեսահոլովակ,բանավեճ քննարկման արդյունքներ)
16-րդ	Հաշվետվությունների ներկայացում

Բյուջե / Հավելված Budget

(Ննդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)

- 1.1 Ծրագրի ղեկավար – ծրագրային գործողությունների համակարգում, աշխատավարձ՝ 4 ամիս x 85000 դրամ, ընդամենը՝ 340000 դրամ:
- 1.2 Փորձագետի աշխատավարձ –Հարցաթերթի կազմում, եռօրյա վերապատրաստման դասընթացի իրականացում 7 երիտասարդների համար, եզրակցության և առաջարկությունների փաթեթի մշակում, 3 օր x 40000 դրամ, ընդամենը՝ 120000 դրամ
- 1.3 Հարցազրուցավարներ 7 վերապատրաստված աղջիկներ՝ հղիների և նոր ծննդաբերած կանանց շրջանում հարցումներ իրականացնելու համար, աշխատավարձ՝ 7 անձ x 15000 դրամ, ընդամենը՝ 105000 դրամ
- 1.4 Հարցումների վերլուծաբան - Հարցումների արդյունքների հիման վրա SPSS ծրագրի միջոցով վերլուծության իրականացում և հաշվետվության ներկայացում, աշխատավարձ՝ 1 անձ 65000 դրամ, ընդամենը՝ 65000 դրամ (սույն հոդվածը կիրականացվի կազմակերպության կողմից՝ որպես ներդրում)
- 1.5 Ծրագրի հաշվապահ /կես դրույթ/ - Ծրագրի հաշվապահական բոլոր գործառնությունների իրականացում, ֆինանսական հաշվետվությունների պատրաստում, աշխատավարձ՝ 4 ամիս x 40000 դրամ, ընդամենը՝ 160000 դրամ:
- 2.1 Տրանսպորտային ծառայությունների վճար (տաքսի) – Կապանի տարածաշրջանում հարցումների կազմակերպում, 3օր Երևան-Կապան 48000, 1 ամիս 11000 դրամ, ընդամենը՝ 59000 դրամ
- 3.1 Գրենական պարագաներ – Ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացների, հարցումների, առաջարկությունների փաթեթի կազմակերպում, 4 ամիս x 15000 դրամ, ընդամենը՝ 60000 դրամ:
- 3.2 Դասընթացի նյութեր և պարագաներ - Ծրագրի շրջանակներում իրականացվող դասընթացների, հարցումների կազմակերպում և իրականացում (սույն հոդվածը կիրականացվի կազմակերպության կողմից՝ որպես ներդրում), 1 ամիս x 10000 դրամ, ընդամենը՝ 10000 դրամ:
- 4.1 Տեղեկատվական գրքույկի դիզայնի աշխատանքներ, որը կպարունակի SPSS-ի վերլուծություն, եզրակացությունն ու առաջարկությունների փաթեթը 1 x 50000 դրամ:
- 4.2 Տեղեկատվական գրքույկի տպագրություն - Տեղեկատվական բուկլետի տպագրական աշխատանքների կազմակերպում, որտեղ կամփոփվեն ծննդօգնության ոլորտում գործող օրենքները, կանոնակարգերը, 10 հատ x 1100 դրամ, ընդամենը՝ 11000 դրամ
- 4.3 Սոցիալական տեսահոլովակի պատրաստում – Կանանց կոնսուլտացիայի և ծննդօգնության վերաբերյալ սոցիալական տեսահոլովակի պատրաստման աշխատանքների կազմակերպում, 1 տեսահոլովակ 1x 160000 դրամ, ընդամենը՝ 160000 դրամ
- 4.4 Սոցիալական տեսահոլովակի ցուցադրում – Հանրության շարունակական իրազեկվածությունը ապահովելու նպատակով սոցիալական տեսահոլովակի ցուցադրության կազմակերպում 30օրվա ընթացքում, 30 օր x 3000 դրամ, ընդամենը՝ 90000 դրամ
- 4.5 Հաղորդաշար-բանավեճ – Իրազեկվածության մակարդակի բարձրացման համար 1 x 50000 դրամ
- 5.1 Հանդիպումների/քննարկումների ընթացքում սուրճի ընդմիջման կազմակերպում մասնակիցների համար, 3x 15000, ընդամենը՝ 45000 դրամ
- 5.2 Առողջապահության նախարարության այցելության ծախս 3 անձի համար (հյուրանոց 4 x 15000,օրապահիկ 4 x 8000) ընդամենը՝ 92000 դրամ

Ընդհանուր - ՀԵԲԱ-ից պահանջվող գումարը կազմում է 1202000 դրամ, ներդրման գումարը՝ 205000 դրամ, ծրագրի ընդհանուր բյուջեն՝ 1407000 դրամ

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել եք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

Սույն ծրագիրը ֆինանսավորման նպատակով որևէ կազմակերպության չի ներկայացվել:

_____ **Քրիստինա Սադաթեյան**

*«Գապանի կանանց ռեսուրս կենտրոն»
հասարակական կազմակերպության նախագահ*

Կ. Տ.